# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐԼԻՎԱԶ ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 5 | Ձմեռային կոշիկը պետք է կարված լինի բնական կաշվից, կիսասպորտային տեսքով՝ բաղկացած լինի քթամասից, վամպից (սայուզկա), կողամասերից, հետնամասից, միջնատակից, հիմնական ներդիրից, հանովի-դնովի ներդիրից, ներբանից: Կոշիկը ներսի մասում կողքերից և տակից պետք է լինի տաք ծածկույթով: Կրնկամասը կոճերից ցածր, կոշիկի կապումը թելերով: Վամպը (սայուզկան) և քթամասը կարվում են 2 կարով: Ներբանը պետք է պատրաստված լինի մաշակայուն թերմոպլաստիկ կաուչուկից, լինի միաձույլ, կոշիկի վերին մասին ամրանա ծուլվածքով կամ բարձր ճնշման սոսնձման եղանակով: Ներբանը գետնին պետք է հպվի հարթ, ներբանի կրունկի մասի բարձրությունը՝ 2,5-3 սմ: Կոշիկի տեսքը տես՝ նկար 1-ում: Վաճառողը պարտավոր է Գնորդի պահանջով համաձայնեցման ներկայացնել մատակարարման ենթակա կոշիկի նմուշը: Նմուշը համաձայնեցնելուց հետո Գնորդի կողմից Վաճառողին կտրամադրվեն կոշիկի չափերը: Փաթեթավորումը ստվարաթղթե արկղերով, արկղի մեջ 10-20 զույգ, արկղերը պիտակավորված: Պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում արտոնագրված, հավաստագրված փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված եզրակացություն՝ Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի համապատասխանության վերաբերյալ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

АРЛИВАЧ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 5 | |